19.11.26 - 19.11.26
13:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դահլիճ

Ս.թ. նոյեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դահլիճում Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը, «Համահայկական փիլիսոփայական ասոցիացիա» և «Հանրային փիլիսոփայության կենտրոն» հասարակական կազմակերպությունները համատեղ կազմակերպում են Փիլիսոփայության համաշխարհային օրվան նվիրված պանելային քննարկում՝ «Միասին մտածել և գործել. փիլիսոփայությունը բազմաբնույթ մարտահրավերների աշխարհում» խորագրով։

Քննարկման նպատակն է վերլուծել անհամաձայնության և արժեքային բազմակարծության պայմաններում համատեղ մտածողության և գործողության հնարավորությունները, անդրադառնալ փիլիսոփայության հանրային նշանակությանը և հասարակական ազդեցության սահմաններին, փիլիսոփայի հանրային պատասխանատվությանը, ինչպես նաև Հայաստանում փիլիսոփայական մտածողության հանրայնացմանն առնչվող հիմնախնդիրներին։

Միջոցառումը նախատեսված է ուսանողների, դասախոսների, հետազոտողների և փիլիսոփայությամբ հետաքրքրվող այլ անձանց համար։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am